

կացին, - ահա այդ անհող գեղերուն խրճիթները: Ուտէին պիտի կորեկ, եգիպտացորեն, խոտ կամ սատկելու վրայ եզան քար դարձած միսը: Պիտի մեռնէին՝ հողին նոյն կտորը, խրճիթը, այծուն կապերտը կտակելով իրենց զաւակներուն ու ասիկա այսպէս «անսկիզբն ու անվերջ»:

Դար մը առաջ մասամբ հասկնալի, սա բաները հեքիաթ կը թուին մեր դարու մուտքին: Բայց իրաւ են անոնք, եղերական ստուգութեամբ մը: Երեսուն տարի առաջ, այդ հողերուն վրայ աշխատաւորը, մահուան գնով իսկ, անկարող էր նշանախեց մը փոխել սա կարգերէն: Ու ասիկա օսմանեան հայրախնա՝ մ կառավարութեան բարիքն էր մեր ժողովուրդին: Փոխադրել այս ամէնը դէպի քաղաքները: Ասիկա պիտի նշանակէր Տանթէ մը ստեղծել:

Հիմէն հանուած գուբին հրաշքովը, թուրքերուն հիւրասէր, գորովոտ, բարեհաճ արտօնութեամբը, Ամենակալին անհաս մէկ պատգամովը - ո՛ր մէկով որ կ'ուզէք գոյութիւն ունէր սակայն այդ գիւղին մէջ մէկ հատիկ սրճարանէն աւելի արդար փառքով մէկ հատիկ օճախը: Գիւղապետը կու գար իր պապերէն, բոլորն ալ պետ, ըստ աւանդութեան, իրենց կարգին: Ու անշուշտ նորէն հրաշքը պէտք է միջամտէ: Որպէսզի հասկնալի ըլլային անոր անդաստանները, հազարէն վեր արտավարով, որոնց կէսը ճահիճը երբեմն տարիներով, բայց անճրեւի քիչ տարի մըն ալ այդ հողերէն տուն կը դրկէր առասպելական բարիք: Իմ հոն եղած տարին ջուրերը հաստ էին եւ երբեք մտադիր նահանջի: Գիւղապետին նախիրը, տեսակնե-րովը, դարձեալ վեր քանի մը հազարէն: Ու անոր աղջիկ-ները, ըսի անգամ մը, փաշաներու պալատին վայել աղ-ւորներ: Հարցուցէք ու զարմացէք, թէ ինչու կ'ըլլան այս ամէնը այսպէս քով քովի, մօտիկը՝ միւս անհուն թշուա-ռութեան, որ իբր ապրում խարանուած ու փակցուած էր ուրիշներու երեք հանգիստ չճանչցած ոսկորներուն: Կը պտտէինք անոր տղուն հետ արտերը, պարտէզները, մարագները,